Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 21.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Աթանեսյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա.Դունամալյանի
Պ. Թադևոսյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 8-րդ, 11-րդ և քաղաքացիական իրավունքի բաժնի 33-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 8

Հավակնորդի կողմից ընտրվել է ճիշտ պատասխան, որը գնահատվել է զրո, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Հարց 11

Հավակնորդը նշված հարցի վերաբերյալ բողոքում կարողացել է հիմնավորել նաև իր ընտրած տարբերակի սխալ չլինելը, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Քաղաքացիական իրավունքի բաժին

Հարց 33

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ Հավակնորդի թեստային տարբերակի քաղաքացիական իրավունքի բաժնի հարցերում հերթական 33-րդ հարցը վերաբերում է աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում լրիվ վերջնահաշվարկին, որին Հավակնորդը սխալ է պատասխանել և Գնահատման Հանձնաժողովն իրավամբ գնահատել է զրո: Հերթական 34-րդ հարցը, որը թեստային առաջադրանքով թվագրված է որպես 33-րդ, վերաբերում է ծայրահեղ անհրաժեշտությանը, Հավակնորդի կողմից տրվել է ճիշտ պատասխան և Գնահատման Հանձնաժողովը գնահատել է մեկ միավոր:

Created With Tiny Scanner

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 6312 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի: Քաղաքացիական դատավարության բաժնից ստացված 17 միավորը բարձրացնել 2 միավորով՝ արդյունքում արձանագրել 19 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Պ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Created With Tiny Scanner